ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2014թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

Երևան համայնքի սեփականություն համարվող Փ.Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 5-րդ հարկի 264.3քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 4 /չորս/ տարի ժամկետով տրամադրել «Մելտեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մելտեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նախագահ Մեսրոպ Մովսեսյանը դիմել է Երևանի քաղաքապետարանն՝ ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի հ.640-Ա որոշման հիման վրա ընկերության կողմից Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքում որպես գրասենյակ զբաղեցված 264.3քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման իրավունքի ժամկետը երկարաձգելու խնդրանքով:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

<<Մելտեքս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 1991 թվականին և հանդիսանում է ինֆորմացիա արտադրող և տարածող ընկերություն, որն իր բազմամյա գործունեության արդյունքում իր ուրույն դիրքն ունի Հայաստանի լրատվական դաշտում: <<Մելտեքս>> ՍՊԸ–ի հիմնադրած <<Ա1+>> հեռուստաընկերությունը, որպես ինֆորմացիոն գործակալություն, ներկայումս աշխատանքային գործունեություն է ծավալում www.a1plus.am կայքում, որը հանդիսանում է որպես ինֆորմացիայի տարածման ալիք և ունի ինտերնետային հեռարձակում: Հեռուստաընկերությունն աշխատանքներ է իրականացնում նաև փաստավավերագրական ֆիլմարտադրության բնագավառում, ինչպես նաև համագործակցում է Հայաստանի լրատվական դաշտի մի շարք այլ կազմակերպությունների հետ:

Հիմք ընդունելով <<Մելտեքս>> ՍՊԸ նախագահի դիմումը, նկատի ունենալով քննարկվող տարածքի համար նախկինում կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրով ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարման փաստը, հաշվի առնելով <<Ա1+>> հեռուստաընկերության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը մեր հասարակության համար, ինչպես նաև լրատվամիջոցի գրասենյակային պայմանները բարելավելու և աշխատանքային գործունեության կազմակերպմանն աջակցելու նպատակով, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում որոշման նախագիծ՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի 264.3քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 4 /չորս/ տարի ժամկետով <<Մելտեքս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու << Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ